

Ս Լ Ո Յ Ա

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

Ե Զ Գ Ե Յ Ե Ր Ա Վ Ե Ր Ա Վ Ե Ր Ա Վ  
Ե Ւ Վ Ե Ր Ա Վ Ե Ր Ա Վ


Ե Օ Թ Ա Ե Ր Ա Ր Ա Վ  
Ե Ր Ա Վ Ե Ր Ա Վ



Յ Ե Ր Ա Վ Ե Ր Ա Վ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1872



# Ա Յ Ա Վ Ի Ռ Ո Ւ Մ

Եօթւերմութեան  
թիվ 7.

Ա Յ Ա Վ Ի Ռ Ո Ւ Մ

ՅՈՒՆԻՉ 31 ·  
1872 ·

ԵՐԵՎԱՆ, ԲԱԿՈՎԻՐԵԱՆ ԵՎ ԳՐԱԳՏԱԿԱՆ

Յ Ա Բ Դ Ա Բ Ա Կ Ա Ն Խ Օ Ս Վ

Ա. Ռ Հ Ա Յ Կ Ա Զ Ո Ւ Խ Մ Ա Ն Կ Ո Ւ Խ Մ (\*)

«Ձեզ եմ ասում՝ Ձեզ՝ հայոց նորահաս երիտարար գործք. Ձեր անունին մեռնիմ, Ձեր արեւին զուր պահ. ասուը լեզու ասլորեցէք, Ձեր լեզուն, Ձեր հաւատը զախմ բռնկցէք»: Այս է Հայոց:

Ա ԵՐԿԱՅ դարաւուս մէջ այս մտաւոր և հաղեար սթափաւթեան ժամանակ, մինչդեռ մեր ազգի յառաջխալզոց աւթեան եւ լրսաւորութեան մասին խորհրդածութիւննք կը լինին լուսութարեմիտ հայրենակցոց յոյսն ձեր վկայ է: Հայկազնւն մանկունք, որ ծիթք, ծաղէ կիք և մեր Ազգին ու հայրենաց այն պրուզն տաք, որոյ դարաւոր ժամանակներէ հետէ կը փափարի մէծաւ-

կարօնիւ: Դնեք աղդային վերանորոգութեան ասպարիցն պէտք է բանեէք. Հայ բարի օրուերը ձեզ համար կը լըզանսն բարի խորհուրդներով, բոլոր կմնիատես հայեցուածքներն ձեր բարեբառափկ ասպարային վկայ են ուղղած և թողլիմ յորդորս կան մի քանի խօսքերն ձեր բարեյցոց անուանն եւ անուրանու ու շաղրաւթեան նուիրուին:

Խճացէք Հայկազնւն մանկունք որ վերին Ամենաբարի Ապահանամութիւննը բաւական համարելով տառա-

(\*) Տես Քերականաթիւն գ. Ա. Տիգ. թիվ. 1870,

պանաց, հալսածանաց և գերութեանց այնքամած բաժակներն՝ զօրս մեր նախորդներն արեան տրտասաւքներով և աղեխարշ հառաջանքներով ծծած են, կը ծագի մեղ համար մի լայնածաւալ լցու, կը լուսաւորէ մեր անցեալն ու ապագայն, կը ստիպէ խորազնին աչքերով խոյզ և ինդիր լինիլ մեր նախնեաց մանրամաղ փոշներու մէջ, հեկեկանօք և հայրակորսոյ ու փառազւրկ որդւոյ տրտասաւօք շրջիլ նոցաման եկած նուլիրական տեղերուն մէջ, տեսնել նոցա փառաց տիսուր յիշտառակներն, որոնել նոցա գրաւոր մնացորդներն՝ առնուլ մեր ձեռքն համբուրել և մեր արտասուքներն նոցա փոշներուն մէջ ցովելով փափկացնել, շունչփշել նոցա և ինոցանէ շունչ ծծել և մի աղգային կենդանութիւն ստանալ:

Վնցան և կ'անցքին պքարանաց, սառնահոգութեան և անտարբերութեան գժուարատար օրերն, Հայկազն մանկունք, մինչդեռ մեր խեղճնախորդներն բռնութեանց և քաղաքական աղգակործան խորամանկութեանց մէջ տարբուքերուելով՝ շրկարողացան պաշտել և անմտաց պահել մեր մայրենի լեզուն:

Վնցան և կանցնին անմտագիր օրերն, մինչդեռ պանդխոտութեան և օտարութեան վարմերու մէջ փախթաթուած, օտար լեզուաց եւ սովորութեանց անձնատուր և անձնուէր եղոծ, չէնք կարողանար և չէնք ըդգար մշտիկ և ծաղկեցնել մեր սեփականը: Վայման ահա կը գոլին մեր ականջաց հաւրենտք, ԱԶԳ, ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆ և ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ խանդակակաթ և զարթուցիչ բառերն, կը դրդեն ըզմեղ մտածել անցեալն ու ապագայն, բաղդատել հինն և նորը և մի գեղեցիկ առաքինութեամբ աղգաշնութեան հանդէս բանալ:

Կը դգամք, որ մեր ազգային լեզուն մշակելով և մեր պանդխոտութեան տարացած ելքարց համար առհասարակ մասն ու բաժին առնելով՝ կարող ենք մեր նախնեաց լրւու շրմաց, անմահ յիշատակարանաց, արձաննագրութեանց և արեան բրատինքով աշխատասիրած գրաւոր վաստակոց ձայնն ու զօրութիւնը հասկնաւ և նովու մեր հառաջանքն, մեր սրոն սկան ձայնի գոշիւններն, մեր սրտի խորոց որդիական զեզմունքներն, մեր կենդանութեան աւեալիքն և վերանորոգութեան եւ ունդն կարող ենք ազգել նոցա գարաւոր գերեզմանաց սրտին: Վեր երանելի նախնեաց ոսկեզինիկ գրաց թարգմանութիւնքն և մեր քրիստոնէութեան աղքիւր Ա. Գրոց երանական ընթերցուածքը աղգային լեզուաւ միայն կարող ենք ընթերցասիրել:

Վայ մայրենի լեզուն, մայրենի բարբառն, նորահամ հայկազն այժմ բանախօսութեան առարկայ է դարձած և ձիգն կը թափէ իւր մնուացութեան գամբարաններէն խթառուիլ խըզել իրաց ձգել իւր աղաւաղութեան կտապներն, ստրկութեան և գերութեան երիգներն և օտարականութեամբ ծածկուած փաթութաններն և իւր օրդւոց համար հասարակաց դառնալ: Վերկայիս մէջ օրագիր և ամսագիր, լրագիր և այլ աշխատասիրութիւնք բոլըն կ'աղաղաղիկն և ձայն կը տան՝ գոնեայ այսուհետեւ Հայ մանկութեան բերանին թութանկը մայրենի լեզուաւ բանան և մատաղ սիրան աղցային կրօնի ծաւալմամբ զարդացնեն: Ձեր վրայ են ուրեմն, նորահամ Հայկազն լեզունք, աղգային վերանորոգութեան յոյերն և պարծաններն, անցածներն արդէն անցած են և ներկայիս մէջ գրանուածներն միայն ի ժառանդութիւն Հայութեան հաղեւ կարող են կտակ

տւանդել։ Հայրենեաց ճշմարիտ զաւակ լինելու համար այնպէս պատրաստեցէք զձեղ, որ Հայրենիքը, ազգայնութեան սուրբ անաւնը ազգաց կարգին մէջ ձեզմնվ չամաչէ, ինչպէս քանի տարիներէ առաջ և այժմ իւր որդոց մէջ մոռցուած և անչքացած աեսնելով իրենց լեզուն, վարքն ու բարքը կ'ամաշէք և կ'ամաչէ։ Դաւք մի յուսահատիք թէ մի փառաւոր ազգշէք կարող կազմել, նկատելով՝ որ հայսծանաց և գիտութեանց մրգիսցով ծովին ալիքները զձեղ հեռաւոր աշխարհները ցիր և ցան են արած։ Ո՞ի յուսահատիք որ մեր հայրենակիցներէն ոմանք մեզմէ բաժնուած են, ոմանք իրենց ազգայնութեան յատկանիներն մոռցած են և ոմանք տգիտութեան մէջ կը թարթափին։

Եթէ դուք աղօթէք և գուն գործէք ձեր ազգային քրիստոնէական անսրատ կրօնի և լեզուի հիմնաց վրայ զարգանալու այս ամեն ազգային ձախորդութեանց շուտով դեղ ու գարման կը լինին։ Դմէն ոյն յուսահատութիւն ՚ի բաց թողած՝ մոտածեցէք դուք միանգամայն, որ մենք ազգ ենք, ունենալով մի և նոյն ծագումն, մի և նոյն կրօնը, մի և նոյն լեզուն, մի և նոյն ուրէնքներն, մի և նոյն վարքն ու բարքն, մի և նոյն փառքն ու թշուառութիւնքն, մի և նոյն յոյսերն, եթէ ոչ բոլոնդախապէն, գմնեամ մէծ մասամբ, որք բաւական են համակրութիւն զարթուցանել որ մեր մէջ միմեանց հետ միանալու, զմիմեանս սիրելու, միմեանց փառայն ցանկանալու և մի մեանց համար մեր անձն զոհ մատուցանելու։ Ուտածեցէք, որ մենք ազգ ենք և մեր հայրենեաց մէջ մեր փառքն ունեցած ենք, այն է մեծանուն թագաւորներ, գիւցազուննախարարներ, հայրենեաց նահատակներ և ճշմա-

րիտ զաւակներ, պատմաբանական արժանայիշատակ գործքեր, օգտակար օրինագրութիւններ, մեծահամբաւ քաղաքներ, քաջութեան, քաղաքակրթութեան, գիտութեանց և արուեստից մէջ անուանի և հուչակաւոր մարդիկներ, վերջամենույնի, բնութենէն պարգեւուած ազգային յատկանիներ, գրծագիրներ և ուրիշ կատարելութիւններ, որոց յիշատակն միայն կարող է շարժել մէր սրակ խորութիւնը և աշխատան ոգին՝ նորոգելու մէր ազգայնութեան փառքը և կանգնելու մէր նախահարց սիրավի և միանգամայն տիրավլ շիրմաց վրայ իրբեւ արձան անմոռաց երախտագիտութեան։ Հայց քաջ իմացէք, որ մեր մայրենի եկեղեցւոց և լեզուի ձեռամբ և հայրենեաց անձկարեաց սիրով կարող են այս մոտածմաններներն և ազգային փառաց վերահորսգութիւննը զարթնուու և վերականգնիլ։ Ուսան զի եկեղեցւոց մէջ միայն, իրբեւ Նոյեան տապանի մէջ, ոշխարհատասան բռնութեանց և նենութութեանց ջրհեղեղին աղատուած՝ զբու զբու ամփափուած մնացած են մէր կենդանութեան արմատներն աղատասիրութեան, ծէսերն և արարողութիւնքն ընդ շերմեռանգութեանց, ազգատիրութիւնն ընդ ներազամութեան, հողածանաց և նահատակութեանց յիշատակներն ընդ տօնելութեան և անմահ մրցականաց, և ՚ի պատկ ամենից աստուածասիրութիւնն ընդ մարդասիրութեան։ Ուր ազգին կտորեցէն մին է նամանապէս լեզուն, նաև մեր մատաւոր ձոխութեան և բանականութեան արգաւաեաց գանձարանն։ Առօրա մէջ մէր ազգի գրաւոր շնութեան և հանճարաց մնացորդներն պահպանուած են և նովաւ միայն հոտարակաց սեղանի վրայ մէր ազգային բնա-

տուր իմացականութեան որառողենքն  
կարող ենք հանգէս բերել։ Իսկ հայ-  
րենասիրութեան համար այլ եւս ի՞նչ  
ասենք , որ իբրեւ մի աղուտական  
հուր և ոքանչելի սէր , իբրեւ կատ մի  
ազգի զգացմանց պատշաճ է թէ հո-  
րըստին , թէ ուսումնականին , թէ  
արուեստաւորին , թէ փարբին և թէ  
մեծին , թէ թշուաւութեան և թէ  
բարեբաղդութեան ժամանակ։ Հար-  
կաւոր է կ'ասենք , թէ ըսրոնացւոյ  
գետնապիոր բնակուրանին մէջ և թէ  
թագաւորաց մարմարոնեայ և սովիա-  
ստատ պալատանց մէջ , թէ Ասհարացի  
տանցի անապատաց մէջ և թէ Այրա-  
բատոց ամենածագղիկ դաշտաց մէջ։

Ուրեմն մեր որտերու մէջ մեր կը-  
րօնի ծաւալումը , մեր լեզուի ազգո-  
վին դորձածութիւնը և դիւրին եղա-  
նակաւ ծաւալումն և մեր բոլըր հոյ-  
րենազուրկ և տարագիր եղած աղդակա-  
ցաց մէջ հայրենասիրական զգացմանց  
զարթուցումն մեր աղդային շնուր-  
թեան տաճարի հաստատուն սիւնքն  
են։

Վաղցը էր մեզ , նորահաս հայկա-  
զնւնք , աղդաշխառութեան այս երեք  
ամենակարեւոր սկզբանց և կատարա-  
ծի վրայ ընդարձակօրէն խօսիլ։ Վաղ-  
ցը էր մեզ առանց հեռուաւոր հայե-  
ցուածոյ՝ նոյն խակ մեր նախահարց  
կեանքրալցոց տուլ թէ մեր աղդի մէջ  
աղատ կրօնասիրութեան և ճշմարիս  
հայրենասիրութեան ձեւըրլ որչափ  
որանչելցներ դորձուած են թէ որտ-  
երասզմի և թէ խաղաղութեան ժա-  
մանակ։ Վաղցը էր մեզ երկարօրէն  
պատմել թէ մեր առաքելական մայր  
Ակեղցին աղդի աղատութեան և յա-  
րատեւութեան համար Բնազրիսի ա-  
ռաքելանման հայրապետներ , հոյա-  
կապ թագաւորներ , դիւցաղուն նա-  
խարարներ , առաքինի նահասակներ

և մարտիրաններ յառաջ բերուծ է , երբ  
հայրենասիրութեան երկրաւոր մա-  
սունքներն իւր բրիտանէական կրօնի  
երկետշունչ վարդապետութիւններով  
զտած և մարտրոծ է և նորա վրայ իւր  
բարեբար թեւեկն տարածած։ Վաղ-  
ցը էր մեզ արգէն խակ ձեր մասազ  
սրտի մէջ աղդիլ և տպաւորել թէ  
մեր աղտատշունչ կրօնի հոգեկապարար  
շերմեռանդութեան և հայրենասիրու-  
թեան ծաւալմամբ բնէչ բարեքներինչ  
հրաշքներ կարող են յառաջ գտլ և  
ի՞նչ երանաւելու աղագայ կարող է  
պատրաստուիլ . բաց այս ամենը այ-  
լում բարեպատեհ ակեղոյ և ժամա-  
նակի թողով բաւական կը հոմարիմք  
և առ այժմ ասել թէ այս եւս մեր  
կրօնի և հայրենասիրութեան ձեռքովլ  
եղած մի ամենամեծ և կենդանի ըս-  
քանչելիք մ'է , որ այսքան դարերէն  
յետոյ , հազարաւոր աղդաց անկմա-  
նէն և անշայտութենէն յետոյ , մենք՝  
հալածանաց , արհաւրանաց և փոթո-  
րիկներու մէջն անցնելով աղդի ա-  
նուն կրելով կենդանի ենք տակաւին .  
և այս ակեղ կը մասնաւորենք մեր խո-  
քը միայն մեր աղդային լեզուի վրայ։

Ուր աղդային լեզուն , որ մեր աղ-  
դայնութեան յատկանիշներէն և միւ-  
թեան կապերէն մին է և մեր ժամա-  
նակի մէջ բանախօսութեան տուարկայ  
դորձած է , երկու գլխաւոր ճիւղի  
կը բաժնուի — Վրաբար , որց մէջ  
միացած է մեր նախնեաց գրուածքնե-  
րըն և նաշնարհիկ վասարիներն , մեր  
պատմական և կրօնական կենաց նկա-  
րսգիրն և աշխարհաբար , որ հար-  
իւրաւորգաւառականվախութիւն-  
ներ և այլատարազ ձեւեր ընդունե-  
լով շատ ակեղ անհասկանալի նոյն խակ  
հայախօսաց համար՝ համարեալ մի օ-  
տարական նոր բարբառ կը ձեւացնէ .  
Վուշննն ունի իւր նղբութիւններն ,

բարտարապետութան ձեւերեւ, իւր ողբրկուած և կոկուած Ելեկներն, իւր քաղցրավուր համաւելքներն, իւր աղջու և համազիւր գարձուածներն, իւր կանոնաւոր և սահմանեալ օրենքներներն, միավեանիւ այն ամեն յատիւ, թիւնքն, որք կատարելութեան հասած լեզուի մը սեփական են, բայց ցաւալի է յոյժ, որ հասարակաց ոչ հասկանալի է Արքորդին ունի իւր ոյ բառարարութիւնն, իւր օտարախորժ ճախութիւնն, իւր անձեւակերպ հընչ մաւելքներն, աեղ տեղ իւր աղջոնդակութիւնն, բայց հասկանալի իւրաքանչիւր տեղական գաւառնն:

Այսպէս ահա ինչպէս մեր մայրենի լեզուն, նյնապէս և մեր ազգի բանասիրաց կարծիքները երկուքի ենքածնուած և խմորման մէջ են: Մեր աղդային լուսաւորութեան մասին լեզուի կարեւորութիւնն իմանալով ոմանք գրաբարն արծարծել կը ցանկան և նորա վրայ առաջ գնալ և ոմանք աշխարհաբարն միայն ի գործ գնել կը պղնեցն, բայց անուզու և անկողմնակի գատելով՝ երկուքն եւս հարկաւոր են ինչպէս մինչեւ ցայսօր հարկաւոր եղած են: Վրաբարն հարկաւոր է մեր մատենագրական ճախութիւնքն հասկանալու, մեր անցան ու գնացան կենաց նկարագիրներն և ազգային բարելաւութեան համար ընարած ճանաւագրական պարհերն վերապնդներն եւ աղջութիւնքներն աղջութիւնքն է մեր առջեւ բացուած կայ, նախախնամնութիւնը և աղջու կը պարաւորեն այցելով, բայց բանական ստանան որց աղջի սմափութեան հոգին կը փափաքի և կարօնի կ'որոնէ:

Հայկազն մանկունք, ահա այս ոլիսի գործունէութեան ասպարէղներ առջեւ բացուած կայ, նախախնամնութիւնը և աղջու կը պարաւորեն այցելով, մեր առջեւ բանական ստանան որց աղջի սմափութեան հոգին կը փափաքի և կարօնի կ'որոնէ:

Հորիկու որ են մեզ և առ հասարակ մեր բարեխան բանասէր հայրենակ ցաց փայթն և եռանդն այնէ, որ աշխարհիկ բարբառով գրուածքներ յառաջացնելով ընտիր բառեր և գարձուածքներ մասացութեան մմութեան իլլու բերեն և գրաբարն ծխուցնն: Վրաբար լեզուի գրուածքներն աշխարհաբարփխաւնիփուան և օտարահնչիւնբառերն վեր ջացնեն, և գրաբար լեզուի գեղեցիկ և ընտիր բառերով նորու մի գրականական ուղղութիւնն առն և Հայ հասարակութեան ընդ հանուը լեզու չեն և ոչ թէ օտարախոսուն ողջանգուկութեան մէջ թողուն, որ մի գաւառի լեզուաւ գրուածն միւսն չհասկընայ և Հայը իւր հայ արենակցի հետ խոսելու ժամանակ թարգմանչի կարօտի: Լեզուի վերամորուգութեան մասին այս ընթացքն ու ուղղութիւնը մեր աղջի մէջ բաւական ժամանակ է շարունակուած և կը շարունակուի, մինչեւ որ կտրիճ երխոսաարդաց գլուխներով գաւառաւկան աշխարհիկը արաւուներն և գրաբարն ժամանակավորձական բավի մէջ հաւաքուին, միանն, ձուլուին և այն տիպն ու սրատիկըն ստանան որց աղջի սմափութեան հոգին կը փափաքի և կարօնի կ'որոնէ:

Հայկազն մանկունք, ահա այս ոլիսի գործունէութեան ասպարէղներ առջեւ բացուած կայ, նախախնամնութիւնը և աղջու կը պարաւորեն այցելով, հայրենական յօժարութեամբ, անխարդախս պատկառանօք մեր նախնեաց մատենագրութիւնքը ընթերցասիրէք, հասկնաք նոցա արտաքին յօրինուածը և ներքին հոգին, նոցա ողորուն և աղջու դարձուածներն, նոցա կախարդիչ սակաւախոս և մեծիմաստ եւ

լեւէջ երն, նաև նոցա խրթին և դրժուարինց մարերն ։ Համանակը և ազդի բարեբաստիկ ապագայի յշալ զձեղ կը պարտաւորէ, որ առանց անհոգաւութեան, առանց սառնութեան և ծաղրածութեան հետամուտ լինիք գաւառական բարբառներու և խորամուխ լինիք նոցա վափախութեանց և օտարաձեւութեանց, ուր կը տեսնէք մեր խեղճ՝ ազդի կենաց բարդ պատկերն և քաշածներն գերութիւն, բրանութիւն, օտարութիւն, պանդըստութիւն, հալածանք, վափախութիւն վարուց, բարուց, սովորութեանց և խոսակցութեանց, բայց միանգամայն կը տեսնէք օտարականութեան ճանհերէն ազատուած և մաքուր մնացած ընտիր բառեր և վայելուչ ձեւեր, որք մեր լեզուի ներկայ կազմութեանը շատ գեղեցկութիւն պէտք է տան :

Վակայն իմացէք որ գրաբարն ձեզ պէտք է անսայթաք առաջնդդինի տխորժակալ աշխ որհուառն մէջ բարին և կատարեալն ընտրել : Վինչն ձեր հւգին ընտելանայ, մինչեւ ձեր ականջներուն մէջ քքաղաքանայ գրաբարի մէջ մահնշիւն և քաղցրալուր ձայնը, չք կարող աշխարհիկ բարբառներու դարձուածոց և բառերու մէջ ընտրութիւն առնել : Վրանց գրաբար լեզուի սոսկումն եւ սարսափի կը գոյ ձեր վրայ, և չք կարող ձեր սեփհականը ճանաչել տեսնելով թէ մեր ազդի նման մէկ վարբաթիւ տղէ (որց մի մասն եւս մոռցած են իրենց լեզուն) ամեն տեղ քանի քանի բարբառներ ձեւացուցած է, ամեն երկրի մէջ օտար բառեր և խօսուածքներ ընդունելով :

Բայց գրաբար լեզու ասելով լրկարձէք թէ մի դժուարամատչելի լետոն և մի կախարդական կամուրջէ, որ մարդոց համար անմերձենալի և ա-

նանցանելի լինի, ոչ, մատաղ մանկունք, շատ դիւրին է հասկունալու՝ ոչ թէ միայն մեր ազգայնոց համար, այլ նաև հայերէնասէր օտարազգիններու, մանաւանդ այս ժամանակիս մէջ, երբ գասական եղանակներն կը դիւրանան, ուսանողութիւնն բառականութեամբ և մտաց գործունէութեամբ զգալի կը լինի քան թէ խարազանաւ և հալումաշ սէրտաղութիւններովէ : Ետ միայն նոցա համար, անհամականալի և դըմուարիմաց է որք անընթերցանէր, անհայերէնասէր, օտարասէր են եւ շունին փոփաք և աղգային եռանդ կարդալու հալածանքէն, սրէն ու կրակէն ազատուած և իբրեւ թանկագին աւանդ և սրանդխառութեան քաղցր բեռն յերկրէ յերկիր տարուած՝ իրենց գրականութեան մնացորդներն և դարէ ցգար ժամանակի ձեռքէն արտագրութեամբ խլուած քրիստոնէական դգանցմանց և պատմական հմտութեանց յիշատակարաններն : Վառնութիւնն, արհսմարհանքն և անաշխատասիտութիւնը ամենաընտրելի և ամենագեղցիկ բանն անդաման կից մարդու կը լինի և անսական մարդոց համար զգուելի և անսական լինի կարող են առնել : Բայց հայրենակից մանկունք, տառնութեան և անջանասիրութեան ժամանակ չէ, այլ երկրպատիկ աշխատափրութեան, երկպատիկ աջարքութեան և մաքառման :

Եսսաւ գնացած աղդաց նայելով և մէնք յառաջ գնալու քիրան պէտք է թափենք, բայց միանգամայն պէտք է մեր անցեալի վրայ մի կարեկից հայեցուածք ձգելով՝ որոնենք ինչ որ կորսրնցուցած ենք : Վզգաշինութեան ձեռն պէտք է միսենք, բայց նիւթերն հնութեան աւերակներէն և մնացորդներէն պէտք է ժողվնք : Պատերազմաց եմաբառաւանց պէտք է դիմադրենք, բայց ոչ դէմ յանդիման յայտնի դրա-

հաւորուած թշնամեաց գլ.մ., այլ դաղսնի սուբերու, ծածուկ հրձգու թեանց և գողունի վիրաց, որոց համար հմտութիւն եւ զգու շւեթիւն հարկաւոր է: Պէտք է իմանաք, որ մեր Ազգն դարաւոր ժամանակներէ հետէ պատերազմներ ունեցած է, ոչ թէ երկիրներ նուաճելու, ոչ թէ Վզգեր կործանելու, ոչ թէ տէրութիւններ կլանելու համար, ոչ, այլ իւր քրիստոնէական մայրենի Վիկեղցին և Վզգայնութիւնն անկախ պահպանելու համար. այս յարաւոււ պատերազմը ունեցած է ոչ թէ միայն մի ազգի, մի տէրութեան կամ թագաւորի հետ, ոչ, այլ աշխարհքիս բողոք ազգաց և տէրութեանց հետ, ուր որ ինքն իւր պանդխութեամբ գանուած է: Վոյն օրինակ պատերազմներ և մրցումներ նաև մեր առջեւը կան, որոց միայն Վիկեղցւոյ աղատական սիրսվ, մեր առաքինի հայրենասիրութեամբ և աղդային լեզուի մշակութեամբ կարող ենք ընդդիմանալ և յաղթել յաղթութեան պաակը ընդունելով մեր ազգի յարաւոււ կենդանութիւնը և բարսական յաւաջադիմութիւնը: Եւ քարձէք թէ մեր Վզգի համար հալածանքներն, պատերազմներն և գերութիւնըն մի թշուառ ճակատագիր և ապաբազդութեան նշան են, ոչ ընաւ, հալածանքն և նեղութիւնըն մեզ համար այն երկնային ամպերն են, որոց մեջն մեր ազգը փամորիկներէն և մրդիկներէն մզուելով անձրեւի վճիտ կաթիլներու նման մաղուած ու պարզուած է մինչեւ մեր ժամանակներն իւր ազգային էութիւնը անկախ պահպանելով: Ո՞ւր նախնիքներն հալածանաց ժամանակ շատ բան շնած և առաւել անմահ մեծագործութիւններ են արած քան թէ մենք մեր իսաղողութեան ժամանակ: Հալածանքը զանոնք արթուն պահպա-

նած է, բայց կուցէ հանգուստութիւնը մեր աշուբըութիւնը թմբեցնելով՝ մեր գլուխն անհոգութեան բարձի վրա գրած են: Հետախուզեցէք միանգամ մ.ր նախնեաց գրաւոր վաստակներն, կրօնակրական եւ հարենակրական հոգին, և մեր ժամանակաց անառաբերութիւնքը և օտարականութեամբ վարակուելն և կը աեսնեք տաաներուս ապացոյներն: Ակատեցէք և ՚ի միտ առեւք նոցա քրտնաջան աշխատութիւնքը և հեղահամբոյ հոգին, որք առանց տպագրական հեշտութեան, առանց գրելու նիւթոց առատութեան հաղուագիւտ մագաղաթներն իրենց թղթի գործարան շնելով, իրենց գըրիչներն տպագրական մամուլ ու իրենց խուցերն տպարաններ, և աւք կեանք զոհելով, անբաւ թարգմանութիւնք, մեկնութիւնք, պատմաբանական յիշատակարանիք և այլ բիւրաւոր վաստակը յ դդւոց որդի աւանդած են, որք որչափ հրոյ և սրոյ, աւերածոց և գերութեան ճարտի դարցած են այնու ամենայնիւ այնչափ մեզ հասած են, մեզ որ այս ամեն բանի դիւրութեան դարու մէջ մեր աշխատասիրածներէն բիւրաւոր անդամ աւելի են: Բայց մենք նոցա սիրտգործութեանց առաջ պէտք չէ ապերախտ գտնութիւնք, պէտք է զդամնիք, որ այն ազգի մեծ բարեկրազքն որոց անուանք պատմութեան մէջ կը կարդանիք և որոց արարքն զմեզ կը զարմացնէ, նոքա բռլրն ալ մէզ համար աշխատած են. մենք նոցա ժառանգութեան մէջ մը ասծ ենք և ոտք կոխած ենք այն ճանապարհի վրայ, որ նոցա ընթացքով նուիրական է: Վնշուշտ պէտք է իմանանք, որ ուր նոքա կանգ առած են, մենք պէտք է սկսինք. ուր նոքա հիմ ձգած են, մենք պէտք է բարձրացնենք եւ մեր յետագայիցն աւան-

դենք ՚ի կասաար հասուցանելու ազգոյնաւթեան այն հրտշալի ասածարը՝ որոց անկեան քարերուն վրայ մեր նախահարք արիւն և քրտինք թափած են Անենք ուրեմն այսպէս նոց ս ժառան գութեան մէջ Հայկազննոց մանկունք, յարդւոց յօրդի ազգի յարտաեւութեան և պայծառավարդութեան կը տակը աւանդենք և այնուհետեւ մէր Արդին կամ Հիւղեցին իբրեւ հինօրեայ արձան, իբրեւ ամենասկերպ անցքերով քանդակուած կոթաղ, իբրեւ քը բխասնէական իենաց սրատկեր՝ համարձակ կարսղ է բարձրացնել իւր աշխարհատես գլուխին և աներիխ զաղակել, “Յորդահոսան հեղեղներ, բազմածուփ աղիքներ, հալսածանաց շանթեր, խորամանկութեանց գաղտնի մուրճեր, յուղեցեր, բորբոքեցեր, թափեցեր ձեր զօրութիւնը, ձեր կատաղութիւնը ու կործանմունքը, ես իմ աղասու կրօնով և նահատակացս արեամբ կենդանի եմ և յաւերդ անսասան տիեզերաց աւերակաց մ.ջ.:

## Բ.Ա.Ն.Ս.ՍԻՐՈ.ԿԱ.Ն ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵԴ, ՇԱՀԱԳ, ԿՈՐԻԿԻՆ

(Հարուսակութիւն և վերջ ուս թիւ 6:)

Կորին. — Անմիկ ըրէք ուրեմն, մարդ, եթէ իւր աշխատութիւնը արդարութեան վրայ հիմնէ, և խոհեմութեամբ ու հաստատուն յարատեւութեամբ աշխատի, չեմ կարծեր որ անպտուղ և անվարձ մնայ, ամեն աստիճանի և լինակի մարդ, սւասնող աշխատէ մերժուելով անսասան տիեզերաց աւերակաց միանք կը գաւինք իւր արդարութիւնը, պարկեցութիւնը և հաւատարմութիւնը զինքը փրկող կարեկից ու բարեսէր սրտեր կը գաւինէ ։ իսկ մոլիները քանի մի անգամ զայլը խաբելն վերջը անօգնական կը մնան, և իրաւամբ, արդարութիւն է որ այնպիսիներն ընկերութեանէ մերժուելով անխնամ մնան առ ժամանակ մի մինչեւ ուղղուին, վասն զի իրենց սիրան այնշափ աւրուած ու շարացած կ'ըլլոց, որ ուրիշին բարեսէր ձեռնտուութիւնըն աւ շարացար կը գործածէն, որով արդարութեան սրատուհասը կը կրեն միշտ, ուրեմն լու ապրելուն ձամբան արդարութիւնն ու առարինութիւնն է ։

Զարին. — Ձաւ, այդ բոլոր ըսածնեւրդ ձմարտութիւններ են, բայց մեր խօսակցութեան հետ ի՞նչ վերաբերութիւն ունին։

Կորին. — Կատ մերձ վերաբերութիւն ունին, նախ ընդունեցէք ըսածներս . . . .

Հակառ. — Իմ իսելքս չի հանիր, հեմա աշխարհի մէջ ոչ ձմարտութեամբ և ոչ արդարութեամբ, այլ խարես խուրեսով է որ գործ կը տէսնուի ի :

Կորին. — Անոր համարէ որ օր ըստ  
օրէ հաւասարմնւթիւնն ալ կը պակախ  
և մարդիկ միշտ կատիածաւոր կ'ըլլան  
և իրարու գէշ աչքը կը նային։ Ի՞սց  
թողունք այս և ուրիշ կազմդառնանք,  
քանի որ դու խաբելու կը յօժարիս,  
ուրեմն ինչու կը զայրանաս՝ երբ այլը  
եւս զքեզ կը խաբեն։ չէ որ աշխար  
հի գործերը փախադարձութիւններ  
են, ինչ որ ընես նոյնը կը դանաս։

Ծահապ. — Այս ընաւ մարդ չեմ խա-  
բած, և ահա ասոր համար կը զայրա-  
նամ, որ ինչու միշտ վիս կը խաբեն։

Կորին. — Եթէ իրօք այդպէս ըլլայ,  
պէտք է գիտնաս, որ մէկ խաբուե-  
լուդ տեղ տասն արդարութեամբ պի-  
տի շահիս, ինչպէս որ մէկ խաբելուդ  
տեղ տասնալ իրաւամբ պիտի կորսն-  
ցնես, սակայն այս ալ գիտնալ պէտք  
է, որ չի խաբելը հերիք չէ, չի խաբ-  
ուելու շափ ալ իմաստուն լինելով ըլ-  
լայ պէտք է ինսաս ուրիներուն խա-  
բէութիւնը ճանչնալու և հեռանալու.  
սակայն ներէ ինձ ըսել, որ եթէ անի-  
րաւութեան հակամիտութիւն ըունե-  
նաս, աշխարհի խաբէութեամբ գործ  
տեսնելուն յօժարութիւն չես ցոց  
տար. երանի թէ ամեն մարդ ինքզինք  
քննիլ գիտնար։

Զարին. — Խօսքդ շարունակէ, տես-  
նենք ինչ վախճան պիտի ունենայ։

Կորին. — Խօսքերս ձեր խօսակցու-  
թեան հետ վերաբերութիւն չւնի  
կ'ըսէք, արդէն խօսածներս՝ խօսելիք-  
ներուս հետ բաղդատէ ուրիմն։ Պու-  
դ. Զարին, քիչ մը յառաջ իիսաս  
բարձրէն կը թռչէիր, քու տաղանդն  
ու արժանիքը ամենայն չափազնցու-  
թեամբ կը հռչակէիր, Պ. Ծահապին  
սուտ եւ անչափ գոլիստը հաճու-  
թեամբ կը լսէիր, և անոնց հաւատա-  
լով նորհակալ կը լինէիր. ըստ իս բա-  
ւականի չափ խելքի կարօտ մէկն ըլ-

լալու է. որ երեսն ՚ի վեր ծխուած այդ-  
չափ ստութեան խունկը կը լու զիջա-  
նի, բայց . . . .

Ծահապ. — Կը բազոքեմ, վիս ստախօս  
կեզծաւ որ կ'անուանես։

Զարին. — Կարծեմ իմօսելու տեղ թըն-  
նամանելու կը սկսիք։

Կորին. — Այս միշտ կ'ուզէմ, որ խօս-  
քին իմաստը իր յատուկ բաւերովը  
բացատրեմ. և գուք կը ներէք, եթէ  
ըսածո ճշմարիս է, պէտք չէք զայրա-  
նալ. քանզի խօսք առւիք, որ ճշմար-  
ատութիւնը սիրով պիտի լսէք. խոկ ե-  
թէ սուտ կամ սխալէ, դարձեալ պէտք  
չէք վրդովիլ այլ հերքել, սակայն զար-  
մանալու բան է այս, որ ես սկիզբէն  
զգուշացուցի, և գուք դեռ խօսքս չի-  
լացուցած գրգռուելու կը ակալիք, բայց  
պէտք է գիտնաք որ ըսածներս դեռ  
սկիզբն է երկանց։

Զարին. — Հըմ . . . շարունակե-  
ցէք . . . .

Կորին. — Բայց, թէ որ դու անոր  
կը ածէն քիչ մ' ալ պակաս խելացի,  
ճարպիկ, հանճարաւոր, և այն և ոյն  
ըլլացիր, անշուշտ պիտի նշմարէիր նո-  
րա խօսքերուն մէջի չափազնցու-  
թիւնը, և համեստութեամբ պէտք էիր  
մերժել. զայս ընելով քու սնապար-  
ծութիւնդ յայտնեցիր։

Զարին. — Երեցէք, այդչափ անքա-  
ղաքալար ըլլալդ չէի գիտեր։

Կորին. — Հոգ չէ, ինչ կ'ու զես ըսէ. միայն մի զայրանար, որպէս վի խօս-  
քերուս ներքին հոգին իմանաս, ես ա-  
պահով եմ, որ վերջը կը զջաս վատա-  
բանութիւն ընելուդ վրայ. իմ սյա-  
մեան գործածելիք քաղաքալարու-  
թիւնս խօսքերուս ճշմարաւութիւնը  
պահելին զատ ուրիշ բան չի կնար-  
ըլլալ. ուսափ կը խնդրեմ քիչ մը եր-  
կայնամիտ եղիք, որ գործերդ ալ քըն-  
նենք. Արդ՝ քանի որ դուք խիստ չու-

փաղանց գաղլուփար մը, համարու մ մը  
ունիք ձեր գործոց վերայ, և քանի որ  
յանիրաւի կը դատէք տպու, իւր թէ  
ձեր արդիւնքը չէ ճանցած, ասով  
իրաւունք կուտաք ինձ յայսնել ձեր  
գործոց բուն շափը, և կշռել ձեր ար-  
ժանիքը, Դուք ազգային գործոց մէջ  
խիստ անշան տեղմի կը բունքը, եր-  
բեմն ուսուցչութիւններ ըսկը չդիտ-  
ցածնիդ սովորեցնելուդ համար . . .

Զարէն .— Այնիրաւելք Պ. Խորիւն,  
ինձ կ'ըսէք թէ մի զայրանաք, բայց  
միթէ չէ իտէք, որ դասարաններուն  
մէջ հոգիս բերանս կուգար, խօսելով  
բերանս կը փրփրէր, լսածս հասկացը-  
նելու համար այնչափ օրինակներով և  
պատմութիւններով կը համոզէի, որ  
դասիս որոշեալ ժամանակը կը լսանար  
և ես չէի զգար, միթէ չես գիտէր, որ  
շատ անգամ աշակերտաց հետ վիճա-  
րանութեան կը բոնուէի եւ անոնց  
օդուին համար՝ խօսելու թօլուու-  
թիւն կ'ընէի, մինչև անգամ դաս տա-  
լու ալ ժամանակ չէր մնար, գիշեր և  
ցերեկ դասատեար համառօտելով և  
օրինակելով աչքի լոյս կը թափէի և  
միտք կը հոգնեցնէի, այսչափ և գեռ  
և շատ ու շատ աւելի անձնուիրու-  
թիւններ կ'ընէի և դու զանոնք կ'ու-  
րանաս,

Կրիտ .— Այս, լսածնիդ ճիշդէ ,  
բայց այդ ամենը իմ լսածս կ'ապա-  
ցուցանեն, դասատետր կ'օրինակէիր,  
աշակերտաց գործ պատրաստելու, այլ  
զանոնք բացատրելու համար, ինչպէս  
կը խօսուվանիք, միշտ ինսդիրէն դուրս  
կ'ելլէիր և դասերդ ապարդիւն կը լի-  
նէր, աւելի վասն այն տեղնէ, որ ինչ-  
պէս ըսի՞ լսուվորածդ սովորեցնել ու-  
ղելով աշակերտաց միտքը կը խանդա-  
րէիր, որուն արդիւնքը ոչ ինչ և հե-  
տեւութիւնը վնասակար եղաւ, Դուք  
ձեր լեզուի ճարտարութեան վստահա-

յած, պատրուակներով ու ճարպիկու-  
թեամբ շարունակ աս ու ան խարե-  
լու գրալած էք, Շմարառութեան  
վայ կը ճառէք, առանց զայն ընդու-  
նելու և գործածելու, բարոյականը կը  
դրուատէք, բայց գործալ անմեղները  
կը գայթակցեցնէք, իսկ երբ յայանը-  
ւի, խկոյն զայն պատրուակելու եւ  
զձեզ արդարացնելու համար ձեր ծը-  
նօտին վսպանակները կը լսրէք, լեզու-  
նիդ կը սրէք, ճարպիկ ճամարտակու-  
թիւնն ու խարէութիւնը օգնութեան  
կ'առնուք և շատ անգամալ կը յա-  
ջողիք,

Զարէն .— Այս, տակաւին լըլիք ըս-  
տակաւին լըլիք ամբարտակու-  
թիւնն ու խարէութիւնը կը համարի:

Կրիտ .— Դուռ ըսելիք ունիմ, քիչմի  
համբերէ : Պարտք և իրաւունք հա-  
մարեալ թէ միշտ կը բարողէք և միշտ  
ալ ձեր պարտաւց կը ժխտէք . դուք  
այնպէս համոզւած էք, որ միայն ուրիշը  
ձեղ պարտական է, և դուք միշտ իրա-  
ւունք ունիք : Աւքիլին գործեր կը յան-  
ձնէք և բարեկամութեան սիրովը կը  
պարտաւորէք որ կատարեն . խկ դուք  
առ այն ունեցած պարտաւորութիւն-  
ները կը վանար, ուրիշին ձեր պատ-  
ճառաւ խայտառակ և անպատիւ լի-  
նելը բնաւ հոգերնիդ չէ, ասոնք պար-  
տազանցութիւն չեն, հապա ինչ են .  
գործի անպիտանութիւն չեն, ինչ են .  
Վարդ ամեն ժամանակ թէ ուսուցչու-  
թեանցդ, թէ տեսաւթեանցդ և թէ  
ուրիշ իրեն համար աշխատած մանր  
մունք գործոցդ մէջ, ոչ վարձք և ոչ  
ձեռնուութիւն պացած է . այլ միշտ  
շափէդ ու արժէքէդ աւելին տուած  
է, և դուք բնաւ իրեն համար կորուստ  
մի ըրած չէք : Վրդ քանի որ կ'ուրա-  
նոք ազգին շնորհըք, ըրածնիդ ապե-  
րախոսութիւն չէ : Պատրաւակ է նաև  
այն, որ իրբ թէ ազգին անշարժու-  
թեան վրայ կը ցաւիք . ընդհակառա-

կըն, ես գիտեմ, որ դուք ազգի շարժումն, լրւասւորութիւն, յառաջադիմութիւն և այլն, այս ամենը միմբայն ձեր շահուց նպաստող բաներ կը հասկնաք, չդիմնալով, որ ջոդնողը օդնութեան արժանիչէ, իսկ ազգին բուն լրւասւորութիլ՝ բնաւ հոգերնիդ չէ. մանաւանդ ձեր օգտին վեսա ալ կը համարիք զայն : Այսքան անիրաւութիւնիմուած գործոց հետեւանքն ասկէ աւելի ինչ պիտի լիներ : Կաշուշու կարծեմ ալ ըստածներու ճշմարտութիւնը կըզգաք և չէք ստիպէր զիս ապացոյցներու ձեռքը զարնել :

Զարեհ. — Դուք ապացոյցով չէք խօսիք, ձեր մէն մի խօսքերը պատգամներ են, սրատձառ, փաստ և ապացոյց ձեզ համար ոչինչ բաներ են, դուք միայն կը խօսիք, կ'օրոտաք, կը շանթիք և միշտ կըտապալէք, աչքերնուդ բան չերեւիր, բայց թէ որ ինձ ալ հարցը նէք, դուք ալ անմիտ, տգէտ, անգործ, անպիտան, տմարդի և խուարամիտ էք . արդէն ես զիտէի որ քեզ նման նսխապաշտեալ մարդէ մի օգուտ ըզլ լար, կըզգայի՞ որ քո բարեկամութիւնդ անհաստատ է, բայց կ'ուզէի որ քակտումը քո կողմէդ ըլլար, ինչպէս որ եղու :

Կարեն. — Հս յառաջալը ըսի, որ մեր խօսակցութիւնը մեր բարեկամութեան թողջողպի, ինչ կ'ուզես խօսէ, միայն սէրն ըլլայ շարժող եւ ոչ զայրութի կիբբը : Հս ըսի թէ գիտնական եմ, բայց խենդ ալ չէմ. ես գործունէութեան և պիտանաւառ ապացութիւնն անհաստատ է, ապացութիւնն ալ չէմ. ես գործունէութեան և պիտանաւառութեան վկայ ըլլարծեցայ, բայց գուցէ թէ այդպէս եղած ըլլամ, սակայն ձիգս է միշտ գործօն և պիտանացու լինել. ես կըզգամ որ տմարդի չէմ, խաւարամիտ ալ չէմ, զքէզ յանդիմանելը զիս այս սրակութեանց չենթարկեր . բարեկամութեան կապը, որ սէրն է, ես տակաւին

չը խվեցի, ուրեմն անհաստատը իմն չէ. ես նախասպաշտեալ ալ չէմ, բայց զգիտեմ թէ ինձմէն սպասած օգուտդ ինչ է, ես խղճով կարսղ եմ վկայել, որ մինչ յարդ բարեկամութեան բոլը պայմաններուն համաձայն վարուած եմ քեզ հետ, բուն իսկ քո զանցառութ գտնուած ատենդ ալ :

Զարեհ. — Դոհ եմ ըստ ամենայնի, բայց շատ խիստ էք :

Կարեն. — Հս ինչ ընեմ, որ ճշմարտութեան լեզուն այն է, և դուք տըրամաբան լինելով սկիզբէն վկայեցիք թէ, համելի է ձեզ ճշմարտութիւնը՝ մինչեւ անդամ եթէ ձեր անձին հակառակ ալ լինի :

Զարեհ. — Այս բայց տրամաբանութիւնը ապացուցութեամբ կը խօսի :

Կարեն. — Ուրեմն տակաւին շօշափելի սրատմական ապացոյցներ կ'ուզէք, բայց ես կը ցաւիմ, որ ատով աւելի պիտի վսդովիք, մանաւանդ սիտի ըստիպունիք յականէ յանուանէ տեղէք, անձեր և գէպքեր մէջ բերել, որ աւելի սաստիկ կերպիւ թէ ձեր և թէ այլոց անձնասիրութեանը սիտի դըպշնիք . ուստի բարեկամաբար կը յօրդորեմ, որ այս գիշեր խղճիդ հետ խօսիս, ըստածներս որոճաս, և եթէ տակաւին տարակօս ունենաս, ուրիշ անդամ առանձին քեզի հետ կը խօսիմք :

Զարեհ. — Աչ, մը, կը խաստովանիմ, որ ալ ապացոյցի կարօտութիւն ըսւնիմ, քանիք ըստածներդ արդէն պատկերի պէս նկարուած են մասաց առջեւ ամենայն հանգամանօք :

Հակառակ. — Ինչ սոյս ըստածներն աւելիքն ալ ընդունեցիր, քո տեղդ իմ ցասումա կը շարժի և գու կը զիջանիս :

Զարեհ. — Ինչ ընեմ, լոելն աւելի օգտակար կը գտնեմ առ այժմ :

Կարեն. — Այդպէս շուտով մի զայրանաբ, ըստածներուն մեծ

մասը քեզ ալ կը վերաբերին, վասն զի քո պարծանքդ ու գանգատներդ ալ անկէ պակաս անիրաւ չեն :

Ըստալ .— Ի՞նչպէս :

Կողման .— Դու երկու արհեստ ու նիս, երկուքն ալ թերի, այնու ամենայնիւ դու զբեզ առաջն կարգի արհեստաւոր կը համարիս, արհեստապետներդ քանի անդամ՝ քեզ ազդարարութիւն ըրին, և յորդորեցին որ միայն մէկը գործածես, որուն մէջ քիչ մի աւելի յաջողակութիւն ունիս, որով անշուշտ աւելի պիտի շահէիր, դու մոտիկ ըրիր, այլ անփոհեմաբար սկսար վտանգաւոր անզգուշութեամբ արհեստաներդ գործածելև աստ և անդասրաար արհեստապետները վար զարնել. ատով չեմ գիտեր, որ քո անունդ կը վատահամբաւես : Ինչ և իցէ, բաւական ժամանակ խարելով խաբխրելով յաջողեցար և կարծեցիր թէ կը շահիս : Ազեր մի, որ մեծ ընկերութեան մի գործակալն էր, չդիտնալով քու բուն արժէքդ, զբեզ իբր կատարեալ արհեստաւոր վարձեց և չափազանց սուղամսականով զրկեց այն տեղ, ուրիէ որ ուզեր էին . դու խոհեմութիւն ըրիր, ամսականիդ շափազանցութեանը վատահելով խանութ եւ տուն կրեցիր օտար երկիր, այն տեղ քո սակաւ և անպիտան նիւթերդ նոցավերայ սուղ գնով ծախեցիր, ճանբուդ ծախութը անոնցմէ լիուլի սուացար, ձրի ընակարան և մանր կարասիներ պահնջնեցիր առիր, և բաւական ժամանակ իւնալէդ դիմուն կենալէդ վերջը միշելու անտրման առիթներ տուիր, պարտաւորութիւններէդ թերացար, որով ստիպեցիր զանիք, որ պատուաւոր կերպով ճանբաց առաջ տան քեզ, չըսէմ վլնուեն :

Ըստալ .— Ո՞նչ ցարդ ինչ և իցէ, բայց այդ տեղ կը շեղիք ճշմարտութենէ. չէ՞ որ գոհաւանակութեան վիայադիր տուին :

Կողման .— Զ ուրբ գիր այն միայնագիր ըսածդ, և բնաւ խօսքն անգամ մի՛ ը ներ, քանզի նոքա քո թախանձանքներէդ և մէջ ձգած միջնորդներէդ ստիւպեալ այնպիսի անձեւ անկանոն վկայագիր մի տուին, զոր ով ալ տեմայ խօսքն անկարեւոր լինելը կը ճաննայ :

Ըստալ .— Օ արմանիք, թող այդ ալ այդպէս ըլլայ, շարունակէ :

Կողման .— Այսպէս լինելն անհելքելի է, կար այն տեղէն, հիմա այս տեղ ալ չես գագարիր քո վեստակար գործերէն և անխոհէմ ընթացքէն, որով բոլոր շահածդ կորուսիր : Յարունակակա տեղ ամստի ամեն տեղ ալ համարումդ կը կօրանցնես՝ գեռ զայն չգտած, պատիւդ կ'աղարտես՝ գեռ ընորոգած, ուրեմն ինչու կը դանգատիս, ինչու քո անձդ նախ չես գատեր, ինչու պակասութիւնդ չես ուղղեր, զուր տեղը բարեկամներէդ ինչու կը զկըւիս, մեծ անխոհէմութեանդ մէկն ալ այդ է, որ անսնց սիրուր կը վկացնես, նոքա քեզմէ աւելի քո օգուտդ մոտածեր են . անսնց զբեզ տանիլ չուզելը մեծ բարեկամութիւն եւ երախտիք պէտք է համարիս, վասն զի այն տեղ հիմա գու բնաւ պատիւ չունիս . ըզ գոյշ կաց եղացը, յանցանքն ուրանալով կամ ուրիշին վայ ձգելով, կամ պատրուակելով չարդարանար մարդ, յանցանքն զգալու է, պարզապէս խոստովանելու է, սրտանց ցաւելու եւ զզլալու է, անդամ մ' ալ ընել առաջդրելով ճգնելու է բոլոր զօրութեամբ և չար ունակութեանց գէմ մաքառելու է : Այսուհետեւ գօնէ խելքդ գլուխոդ մողիէ, գործոյդ եւ ընտանեացդ հաւատարիմ եղիր, արդարութիւնն ու ճշմարտութիւնը հիմն ըրէ գործոցդ և խօսքերուդ, աշխատաւթիւն մի ինսպիր, յԱստուած

ապաւինիր՝ և Պ. Օարեհին խրատուցըն հետեւէ, քո վնասուցդ պատճառ դուն ես :

Ըստապ. — Այսործես թէ կենացս մէջ աներեւութաբար միշտ հետո եղած ես, ամեն մանրիկ գաղտնիքներս ալ գիտես, հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ Պ. Օարեհ շուտով համոզուեցաւ, վասն զի ըսածներէդ կըզգամ, որ եթէ քիչ մի հակառակիմ, յականէ յանուանէ ամեն բան պիտի նշաւակես, և ահա կը տեսնեմ, որ դու իմ գործերս ինձմէ լաւ գիտես :

Կրիմ. — Դժբաղդութիւնն այդ է որ տիկարամիոք կըկարծեն թէ իրենց խարհական գործերը միշտ թաքուն կրնայ մնալ, բայց ըլյայնուած բան չը կայ :

